ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

Մուշեղ Իշխանը (Մուշեղ Ճենտերեճյան) ծնվել է Թուրքիայի Անկարայի նահանգի Սիվրի--Հիսար գյուղաքաղաքում 1914 թվականին: Ունեցել է ծանր մանկություն: 1915-ին ընտանիքը տարագրվել է: «Մանկությանս առաջին 4-5 տարիները անցած են աքսորի սարսափներուն մեջ»,- գրել է նա «Ինքնակենսագրականում»: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ապա՝ երիտթուրքական շարժման հետևանքով Մուշեղ Իշխանը ապրել է աքսորի և փախուստի սարսափները: 1923 թ. հաստատվել է Դամասկոսում (Սիրիա): Այստեղ հաճախել է Կաթողիկե, Ավետարանական և Առաքելական վարժարանները: 1928-ին սովորել է Հայոց Ազգային վարժարանում՝ աշակերտելով Հակոբ Օշականին: 1930 թ. ընդունվել է Բեյրութի գիշերօթիկ Հայ ճեմարան, որը բացել էին Լևոն Շանթը և Նիկոլ Աղբալյանը: Ստանալով ուսուցչի վկայական՝ դասավանդել է նույն ճեմարանում: Չբավարարվելով ձեռք բերածով՝ Մուշեղ Իշխանը մեկնում է Բրյուսել, սովորում տեղի համալսարանում (գրականություն, մանկավարժություն, հայագիտական դասընթացներ): 1940-ին վերադառնում է Բեյրութ, ուր աշխատում է իբրև ուսուցիչ մինչև իր մահը:

Մուշեղ Իշխանը բանաստեղծ է, արձակագիր, դրամատուրգ, քննադատ, հրապարակախոս և մանկավարժ: Լույս է ընծայել բանաստեղծությունների ութ ժողովածու, արձակ և դրամատիկական երկերի յոթ գիրք, հայ գրականության դասագրքի երեք հատորներ: Այսուհանդերձ, նրա բազմաթիվ աշխատությունները ցարդ մնում են սփյուռքահայ պարբերական մամուլի էջերում: Լույս է ընծայել բանաստեղծությունների հետևյալ ժողովածուները՝ «Տուներու երգը» (1936), «Կրակը» (1938), «Հայաստան» (1946), «Կյանք և երազ» (1949), «Ողջույն քեզ, կյանք» (1958), «Տառապանք» (1968), «Արևամար» (1986), «Ոսկի աշուն» (1963), «Իրիկնալույս ռումբերու տակ» (1991, հետմահու): Արձակ գործերն են «Հացի և լույսի համար» (1951), «Հացի և սիրո համար» (1956), «Մնաս բարով, մանկություն» (1974) վեպերը, «Սպասում» (1977) վիպակը: Դրամատիկական երկերից ուշագրավ են «Մեռնիլը որքան դժվար է» (1971), «Կիլիկիո արքան» (1975) պիեսները: 1990 թ. «Նաիրի» հրատարակչությունը լույս ընծայեց Մուշեղ Իշխանի «Երկեր» խորագրով ստվար հատորը: Ստեղծագործության ներքին ազդակը տարագիր հայի պայքարն է ուծացման վտանգի դեմ՝ հանուն սեփական դիմագծի պահպանման, ազգային և համամարդկային իդեալների կենսագործման: Նրա բանաստեղծությունները տոգորված են նուրբ քնարականությամբ, խոհականությամբ:

Մահացել է 1990 թ. հունիսի 12-ին Բեյրութում: